

ԽՕՁԱՅ ՆԱԶԱՐ

Տէր Յովհաննանց մեղի կուտայ Խօջայ Նազարի տապանագրերը, որ կը հաստատէ անոր մահը 1636 թուականին, կ'աւելցնէ իր մէկ ծանօթութեան մէջ տապանագրի սա տողին համար՝

ամֆդ է ժ. Ե. Բ. գերուսման.—

«Որպէս ինձ թուի, ամք կենաց նորա է է յիսուն եւ երկու, զի ժ տառն բաղմապատկելով ընդ Ե. տառին՝ լինի յիսուն, յոր յաւելեալ եւ զԲ տառն լինի յիսուն եւ երկու»:11)

Ես որեւէ պատճառ պիտի չունենայի ասիկա չընդունելու: Սակայն, նոյն Տէր Յովհաննանց մեղի կուտայ պատճէնը հրովարտակի մը, որ Շահ Ապպաս Մեծ շնորհած է Խօջայ Նազարին աղատ վաճառականութեան համար եւ որ կ'աւարտի՝ «Գրեցաւ յառաջնում ջամազիօլ ամսեան յամի 1001 (1580): 12):

Ամֆիջապէս հոս ճշգեմ, որ 1001 շիճրէթի հաւասար չէ 1580-ի, ինչպէս որ Տէր Յովհաննանց կը գտնայ: Իսկ իմ հաշիւովս ճամատիւլ (էվէլ) 1001 հաւասար է յունուար 24, 1593-ին: Սակայն, անկարելի է, որ 1636-ին մեռնող 52 տարեկան Խօջայ Նազար, որ այդ հաշիւով ծնած պիտի ըլլար 1584-ին, արդէն ազատ վաճառականութիւն ընելու հրովարտակ մը ստացած ըլլար իր ծննդէն 9 տարի վերջ, 1593-ին: Ես կը խորհիմ թէ՛ գուցէ Խօջայ Նազարի տապանագրին ընթերցման մէջ սխալ մը կայ, մանաւանդ որ Սաֆրազի եւ Նազարի ծննդեան թուականներուն մէջ 17

երկար տարիներու բաց մը կայ, եւ Խօջայ Նազարի կեանքին տեւողութիւնը աւելի քան 52 տարի ըլլալու է:

Առաքել Դաւրիթեցի Զուղայի 1605 բռնագաղթի մասին խօսած ատեն կը վկայէ, թէ Շահ Ապպաս Մեծ բարեկամութիւն ցոյց կուտար Խօջայ Նազարի եւ իրեններուն, որոնք, ըստ երեւոյթին, արդէն գաղթէն առաջ Սպահան հաստատուած էին, կամ զոնէ Պարսկաստանի մէջ տարիներ առաջ առեւտրական ցանց մը ունէին:

Դաւրիթեցի կը պատմէ թէ՛ ինչպէս խորամանկ Շահ Ապպաս Մեծ «էր բաղմահանճար եւ խելացի, նախահոգակ. հնարեցաւ բազում եւ պէս պէս հնարս ազգին Հայոց՝ զի մնացեան յաշխարհն Պարսից, զի թէ ո՛չ էր այնպէս հնարեալ՝ ո՛չ մնային: Նախ՝ զի ինքն Շահարասս անէր սէր ընդ ազգին Հայոց՝ եւ մեծարանս նոցա. եւ մանաւանդ ընդ Զուղայեցոց, որոց զլիաւորի անունն էր Խօջայ Սաֆար, եւ սորին եղբորն՝ Խօջայ Նազար եւ որդւոց սոցին, Մէլիք աղայ, եւ Սուլթանում, եւ Սարֆրազ: Եւ հանապաղ ինքն Շահն դայր ի տունս նոցա, ուտէր եւ ըմպէր ընդ նոսա զկերակուրս նոցա առանց խորելոյ, որպէս սովորութիւն է Պարսից անեւ խարութիւն ընդ քրիստոնէից. այլ եւ ինքն Շահն կոչէր զնոսա ի տուն եւ ի սեղան իւր, եւ պատուէր ընդ մեծամեծս իւր. այլ եւ պատուէրեալ էր իւրոց նախարարաց նոյնպէս անեւ:»13)

Այս արքայական համարումին լաւ ապացոյց կրնանք սեպել Տէր Յովհաննանցի ներկայացուցած Խօջայ Նազարի տրուած Շահ Ապպաս Մեծի հրովարտակը: Նոր Զուղայի վանքի թանգարանին մէջ պահուած քանի մը տասնեակ հին ու նոր հրովարտակներուն կարգին ես չհանդիպեցայ այս հրովարտակին, եւ ցաւալի է ըսել, որ Տէր Յովհաննանց ալ իր

11) Պատ. Նոր Զուղայու, էջ 93, ծանօթութիւն 5:

12) Անդ էջ 159:

13) Պատ. Դաւրիթեցոյ, էջ 64: